ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՓԱՐԱՔԱՐ 2025)

“Ազգային առաջընթաց” կուսակցությունը, ի դեմս վարչության նախագահ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, և **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆԸ** հաստատում են սույն նախընտրական ծրագիրն ու իրենց ծրագրային առաջնահերթությունները՝

- Առողջապահության ոլորտում՝ բուժամբուլատորիաների կառուցում և վերակառուցում, վերանորոգում, գործիքային հագեցվածության բարձրացում,
- Գյուղատնտեսության ոլորտում՝ յուրաքանչյուր տարի Փարաքարի յուրաքանչյուր բնակավայրում/համայնքում առնվազն 2000 գծամետր ոռոգման ցանցի կառուցում և/կամ վերակառուցում, խորքային հորերի կառուցում և/կամ վերակառուցում, գազաֆիկացման մակարդակի համամասնական բարձրացում բոլոր համայնքներում,
- Կոռուպցիայի դեմ պայքար և կանխարգելում՝ համայնքի վարչական բոլոր գործառույթների խիստ վերահսկում, հողի օգտագործման, շինարարական նորմերի ու շինթույլտվությունների՝ օրենքով սահմանված կարգով անցկացում և մրցույթների մասով օրենքի ու թափանցիկ աշխատալառնի որդեգրում,
- Փարաքարի վարչական տարածքում ընդգրկված բոլոր բնակավայրերի կայուն և համաչափ զարգացում,
- Բազմաբնակարան շենքերի տանիքների, բակերի և ներբնակավայրային փողոցների բարեկարգում, լուսավորություն և կահավորում,
- Միավորված Փարաքար համայնքի գլխավոր հատակագծի մշակում և հաստատում,
- Աղբահանության որակի բարելավում,
- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում,
- Հանրային տրանսպորտի որակի բարելավում,
- Հանրային առողջապահության և կրթության որակի բարելավում,
- Թափառող շների հիմախնդրի լուծում,
- Մշակութային ու սպորտային կյանքի աշխուժացում,
- Ավագանու դերի բարձրացում, ավագանու նիստերը չեն լինելու ձևական, ավագանին լիարժեք իրագործելու է իր լիազորությունները, հատկապես վարչական գործառույթների իրականացման մասով, տարեկան բյուջեն հաստատվելու է մինչև նոր ֆինանսական տարվա սկիզբ, համայնքի ղեկավարը աշխատելու է թափանցիկ ու հաշվետու ձևով, բնակիչների խնդիրները լուծվելու են արագ և առանց բյուրոկրատական ձգձգումների: